Հրանտ Մաթևոսյան

Իսկ Հրանտ Մաթևոսյանն ասաց...

Հարցրեցի.

– Մարկեսն այսպիսի միտք ունի. «Ինձ համար ամենամեծ դժվարությունը ածականն է, ածականի տեղը, և դրանից է կախված, իմ կարծիքով, թե այսինչ գրվածքը պատկանո՞ւմ է, թե չի պատկանում գրականությանը...

Ածականն այն է, ինչը զանազանում է մի գրողին մյուսից, դա իրականությունը տեսնելու նրա կերպն է, գույնը, ձայնը»:

Ի՞նչ է մտածում Հրանտ Մաթևոսյանը:

Պատասխանեց.

– Մարկեսը թող ասի: Մարկեսը կարող է ասել: Իսկ մենք՝ հայերս, զզվել ենք ածականներից: Մեր ամբողջ կյանքը ածական է եղել: Մեր ամբողջ գրականությունը ածականների գրականություն է: Մերը գոյակա՛նն է լինելու: Մեր ժողովրդին, մեր գրականությանը, մեր գրողներին գոյակա՛ն է պետք:

Հովհաննես ԱՅՎԱԶՅԱՆ

«Ար», 01.03.1995 թ.